

Ի Ն Ն Ե Բ Ո Ր Դ Տ Ա Ր Ի

Մ Շ Ա Կ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան, Վերադարձան մէջ:

Օտարազարգացողը դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшак“:

Իմացատուները բաց է առաւտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և սուր օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանայն բառի 2 կոպեկ:

ՈՂԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

Վերջ չը կայ:—Ն ե թ թ ի ն ա ե ու թ ի շ ի ն
Նամակ Գրիգորոսովից: Նամակ Նովո-Իգանովից
Նամակ Ալեքսանդրապոլից: Նամակ Գանձակից
Նամակ Աստրախանից: Նամակ Սոմաղիին: Ներքին
լուսին:—Արտաքին ա ե ու թ թ ի ն: Թիֆլիս:
Ճրարներ:—Մշակի: Հեռագիրներ: Յայտարար-
ութիւններ:

Վ Ե Բ Ջ Զ Լ Կ Ա Յ

Երբ որ վիճաբանութիւն ա-
նդները անաղիւ կերպով են
վիճաբանում, յեղաշրջում են ճըշ-
մարտութիւնը,—այն ժամանակ
վէճը երբէք վերջ չունի:

Մենք սահպված ենք դար-
ձեալ մի անգամ պարզ տ է-
զիսներ զնն մեր յարուցած
խնդրի մասին կրօնի և ազգու-
թեան սարբերութեան վերա-
բերութեամբ:

Ոչ մի ազգութիւն չը կայ,
որ ամբողջութեամբ մի դաւա-
նութեան պատկաներ:

Կրօնը էական մասը չէ մի
ազգութեան. դասնութիւնները
կարող են այլ և այլ լինել, բայց
ազգութիւնը այդ այլ և այլ
կրօններ դաւանողների դարձեալ
կարող է մի լինել:

Ազգութեան էական մասերը
սրանք են. մայրենի լեզու, հայ-
րենիք և ցեղ:

Ըստնց հայրենիք, սուսնց
հաստատ հող, որոշ գետին ուրի
տակ, ոչ մի ազգութիւն գոյու-
թիւն ունենալ չէ կարող: Եթէ
ազգութիւնը կորցնում է իր
հայրենիքը և ցրվում է ամբողջ
աշխարհի երեսի վրա, նա այլ
ևս ազգութիւն չէ:

Բայց ազգութիւնը կարող է
կորցնել ճին հայրենիքը և այն-
քան այժմ ունենալ որ ստեղծի
իր համար մի նոր հայրենիք:
Այն ժամանակ նա դարձեալ
կարող է շարունակել գոյութիւն
ունենալ որպէս ազգութիւն, ե-
թէ միայն պահպանել է և զար-
գացնում է իր մայրենի լեզուն:
Յեղը մինչև անգամ կարող է
փոխվել, եթէ ազգութեան ան-

դամները խառնվեցան ուրիշ ցե-
ղի հետ:

Կրօնը կարող է փոխվել, այլ
և այլ կրօններ մտնել ազգու-
թեան մէջ,—դարձեալ ազգու-
թիւնը կը մնայ, եթէ ազգու-
թիւնը պահպանել է մայրենի
լեզուն:

Յեղը կարող է փոխվել, ուրիշ
ցեղերի հետ խառնվել,—դար-
ձեալ ազգութիւնը կը մնայ, եթէ
մայրենի լեզուն պահպանվի:

Հայրենիքը կարող է փոխվել,
նոր հայրենիք ստեղծվել,—գար-
ձեալ ազգութիւնը կը պահպան-
վի, եթէ մայրենի լեզուն պահ-
պանված լինի:

Բայց եթէ մայրենի լեզուն
կորչի, մայրենի լեզուն անհետա-
նայ ազգութիւնից,—անմիջապէս
ինքն ազգութիւնն էլ, որպէս
ազգութիւն կանհետանայ: Կը
մնան միայն անհատներ, բայց
ազգութիւնը կը կորչի:

Եթէ մի ազգութիւն իր կրօնը
պահպանեց, բայց կորցրեց հայ-
րենիքը, իսկ կրօնի հետ պահպա-
նեց իր լեզուն,—նա դարձեալ,
եթէ բաւական բազմաթիւ է և
ցրված չէ, կարող է ստեղծել մի
նոր հայրենիք, թէ է ալ շատ
քիչ ազգերին է աջողվել և այ-
ժմ երկրագնդի վրա ազատ
ստեղծ չը կան:

Եթէ մի ազգութիւն պահպա-
նելով կրօնը, պահպանի մայրենի
լեզուն բայց մնայ հայրենիքում,—
նա պէտք է շատ պի վերականգնա-
նացնել իր մայրենի լեզուն, որպէս
զի կենդանանայ որպէս ազգու-
թիւն, եթէ ոչ նա մնալով հայ-
րենիքում և պահպանելով կրօնն
էլ, եթէ կորցրեց իր մայրենի
լեզուն, կը լուծվի մի այլ, հա-
րեան ազգութեան մէջ, ուրեմն
կանհետանայ որպէս ազգու-
թիւն:

Եթէ մի ազգութիւն հաւա-
տարիմ պահպանելով իր կրօնը,
կորցրեց իր մայրենի լեզուն և
իր հայրենիքը,—այլ ևս ոչինչ չի
փրկի նրան որպէս ազգութիւն:
Այս գուցէ միշտ կը մնայ որպէս

առանձին արանդ, բայց այլ ևս
երբէք չը կուզի ազգութիւն:

Ուրեմն կրօնի, ցեղի, մինչև
անգամ հայրենիքի փոխվելը չէ
փոխում ազգութիւնը: Միայն
լեզուի փոխվելը կատարելապէս
ոչնչացնում է ազգութիւնը:

Ազգութիւնը առանց ընդհա-
նուր հայրենիքի և մի մայրենի
լեզուի չէ կարող գոյութիւն ու-
նենալ, բայց ունենալով որոշ
սահմաններով հող և յայտնի
ազգային լեզու, ինչքան էլ բազ-
մաթիւ լինին այդ ազգութեան
մէջ այլ և այլ դասնութիւններ,
ինչքան էլ խառն լինէր այդ ազ-
գութեան ցեղը, նա դարձեալ
կը լինի մի ազգութիւն:

Հայրենիք անշուշտ պէտք է
ունենալ: Եթէ կորած է ճինը,
պէտք է ստեղծել նորը: Մայ-
րենի լեզուն պէտք է ունենալ,
որովհետեւ նա է մի ազգութիւն
միակից որոշող միակ գործիքը:

Բայց եթէ մի ազգութեան
ամբողջ գոյութիւնը միմիայն կը-
րօնից է կախված,—նա կը լինի,
այո՛, հաստատ աղանդ, բայց
երբէք չի լինի ազգութիւն:

Այդ պատճառով այն հայը
որ ապրում է հայրենիքում և
խօսում է հայերէն լեզուով, մեզ
համար մի և նոյն է նա ինչ
կրօնին է պատկանում: Այս
դարձեալ հայ է, նա աւելի հայ
է, քան թէ այն հայը որ կը օ-
րով հայ է,—թէ է դա հնարա-
ւոր բան չէ,—բայց ապրում է
իր հայրենիքից դուրս և չը գի-
տէ իր մայրենի լեզուն:

Կաթոլիկ կամ բողոքական
հայը, որ գիտէ իր մայրենի լե-
զուն և ապրում է իր հայրենի-
քում,—նա աւելի հայ է, քան
թէ լուսաւորչական հայը, որ
ապրում է հայրենիքից դուրս և
չը գիտէ իր մայրենի լեզու, կամ
նոյն իսկ ապրում է հայրենիքում
և չը գիտէ իր մայրենի լեզուն:

Այս պայտիտով յայտնվում է
որ լուսաւորչականների մեծ մա-
սը, որոնք չը գիտեն իրանց
մայրենի լեզուն, իսկապէս հայ

էլ չեն, որովհետեւ կորցրին այն
Փակտորը, մայրենի լեզուն, որ
չուրում է մի ազգութիւն միակից:
Ուրեմն ո՛ր մնաց այն սկզբունքը
թէ կրօնն է ազգութեան նեցուկ,
երբ կրօնը ունելով կարելի է
կատարելապէս կորցնել ազգու-
թիւնը:

Գ. Ա.

Ն Ե Բ Ի Ի Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ն

ՆԱՄԱԿ ԳԻՐԳՈՐՈՍՈՒՆՑ

Ապտեմբերի 30

Այն շարքը, որ պարզեց Մշակը վերջնակա-
նապէս, ներթափանցելով խառնարանների ամեն տե-
սակ կեղտոտ գրաբարութիւններին, նրա այն
յողմանակն է, որ պիտի շահագործէ Մշակի
անցեալ և ապագա գործունէութեան զարդը: Այդ
շարքը կրօնի և ազգութեան գաղափարների մի-
մեանց տարբերելն է, որ գարեթի ընթացքում
հայոց ազգի համար միշտ մի անբաժանելի խօսք
է եղել: Վերջնապէս ով իրան չէ ուղում գուրի չա-
մարի մի փոքր բանականութիւնից, նա պիտի
հասկանայ թէ յիշուի ազգութիւնն ասելով
հայը չը պիտի երեսկայի իր աչքի առջև անշուշտ
Եջիածնի գանդակատուրը կամ վարդապետի
վեպարը, այլ հայկական արեւուն, լեզուն և շարժի:
Ամսի 15-ին, անցնելով Օղէտայից Քիչնով,
մտադիր էի մի քանի օր մնալ այդտեղ իմ սեփա-
կան գործերիս պատճառով, բայց այնպէս
պատահեց, որ ստիպուած եղալ շուտով վերադա-
նալ Օղէտ, անտեղիւնով և մի քանի ժամանակ
մնալով Գրիգորոսով փոքրիկ քաղաքը: Այսպիսով
իմ աշխույժը բաւական տեղեկութիւններ հաս-
նեց այս կողմերի հայ ազգաբնակչութեան մասին:
Այնպիսին ասեմ, երբէք մարտն էլ չէր անց-
նում թէ Քէյսարաթի միջնակարգ կարող եմ զը-
նել մի այդպիսի մեծ հայոց տարր և այդպիսի գը-
րիչ նիւթական կողմից: Հայաբնակ քաղաքները
հետեաններն են՝ Քիչնով, Օրջէ, Հնիւր, Բէյր,
Աքիրման, Բզմալի, Բառուշ, Քիլի, Օղէտսա,
Գրիգորապոլ, Նիկոպոլիս և Երեսուն: Այս վերջին
չորս քաղաքները ըստ աշխարհագրութեան թէն
պատկանում են Երեսունեան նահանգին, բայց հա-
յոց հոգիք վիճակագրամասնութեան համեմատ բոլոր
էն նախնիներին չես կարծում են մի անբա-
ժան վիճակ, որ կրում է Քէյսարաթի միջնակ
անունը: Վերջինիս քաղաքները չը կարողանան
մեծ զիւղելով, որոնք մէջ կան նոյնպէս բազմա-
թիւ հայեր: Հայ գիւղականը պարագում է այս-
տեղ երկրագործութեամբ, պարտիկապատկանեմ
գրաստապատկանեմ և գիւղատնտեսութեան մի
քանի այլ ճիւղերով: Կարելի է ամենայն վստա-
հութեամբ ասել թէ համայն Կովկասի և Անդր-
կովկասի մէջ բնաւ է կարելի գտնել մի անձին,
որի մէջ ապրող հայ գիւղացիները և քաղաքայի-
ններ այնպիսի ունեւոր լինէին, որպիսի այստեղի
հայեր, որոնք մէջ կան այնպիսի անուանի կա-
ռուածատեղիք, ինչպէս Մանուկ-բէյ, Խիսան Սուխ-
թիւ (արձատարէն Սուխթի), Ուրֆայ եղբայրներ,
Գայիով, Բալիսա, Բոզոս, Անուշ, Լիբիք, Հաֆի-Կա-
րաբէյ և այլն: Սոցանից իրաքանայիք ունի այն-
պիսի ապարաններ, շքեղ ամառանոցներ և գրաս-
րաններ, որոնց վրա կովկասեցի հարուստ հայը
հասկացողութիւն անգու չէ կարող կազմել: Նոյ-
նը կարելի է ասել գիւղացիների վերաբերու-
թեամբ, շամաւանելով նրանց կովկասեան հայ
գիւղացիների շնո:

Այս բոլորը վերաբերում է միայն Կովկասին
կողմին: Իսկ զայնով այստեղի հայերի հայու-
թեանը, այս բառի կատարելա մտքով, Քէյսա-